

«Հավելված
Հայաստանի Հանրապետության
հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
2026 թվականի --- --ի
N --- -Ն որոշման

«Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
2019 թվականի դեկտեմբերի 25-ի
N 516-Ն որոշմամբ հաստատված
կանոնների

(Բանկի ձևաթղթի վրա)

__._.20__թ.

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ N _____

1. Սույն Երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է _____ -ի (այսուհետ՝ Պրինցիպալ) և _____-ի (այսուհետ՝ Բենեֆիցիար) միջև __._.20__թ. կնքված _____ պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող՝ Պրինցիպալի վճարային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում:

2. Երաշխիքով _____ (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) Պրինցիպալի խնդրանքով անվերապահորեն պարտավորվում է Պայմանագրից բխող՝ Պրինցիպալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Բենեֆիցիարի կողմից ներկայացված գրավոր պահանջով (այսուհետ՝ Պահանջ) անառարկելիորեն վերջինիս վճարել մինչև _____ գումար (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջում նշված հաշվեհամարին (հաշվեհամարներին)

3. Երաշխիքը գործում է __._.20__թ.-ից մինչև __._.20__թ. ներառյալ:

4. Երաշխիք տվող անձը պարտավորվում է Պահանջը ստանալուց հետո առավելագույնը երեք աշխատանքային օրվա ընթացքում դրա հիման վրա պահանջվող գումարը անվիճելիորեն և անառարկելիորեն փոխանցել Պահանջում նշված հաշվեհամարին (հաշվեհամարներին):

5. Երաշխիքի գումարը կնվազեցվի Պահանջի արդյունքում Երաշխիք տվող անձի կողմից իրականացված յուրաքանչյուր վճարման գումարի չափով:

6. Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

7. Երաշխիքը ենթակա չէ բանկի կողմից միակողմանի հետկանչման (չեղարկման կամ այլ ֆինանսական գործողությունների)՝ առանց Բենեֆիցիարի գրավոր համաձայնության:

8. Երաշխիքի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառելի է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

Լիազորված անձ/ ստորագրություն»: